ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 19.06.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/11

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Արհովշին» ՍՊԸ-ի 31.05.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից նյութերը, ՀՀ մշակույթի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) գրավոր դիրքորոշումը, պարզեց հետևյալը.

1. «Արհովշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Արհովշին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 31.05.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2017թ. ապրիլի 5-ին հայտարարված N ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38 ծածկագրով բաց ընթացակարգին (այսուհետ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Արհովշին» ՍՊԸ-ն: Հայտերի բացման օր է հանդիսացել՝ 2017թ. մայիսի 16-ը: Ընթացակարգի հավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվել է Քաղաքաշինության բնագավառում «Շինարարության իրականացում (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)» լիցենզիա՝ «Բնակելի, հասարակական և արտադրական» ոլորտի, սակայն Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.3 և 2-րդ մասի 2.2.3 կետերով «Մասնագիտական փորձառություն» չափանիշով նմանատիպ համարվող նշվել է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգման աշխատանքների կատարումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.05.2017թ. կայացած նիստում թիվ 3 արձանագրության 1.3 կետով նշվել է, որ ««Արհովշին» ՍՊԸ-ի որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա էր անհամապատասխանություն, մասնավորապես մասնակցի նախկինում կատարած աշխատանքները չէին համապատասխանում հրավերով սահմանված նմանատիպ աշխատանքների պահանջներին: Մասնակցին էլեկտրոնային եղանակով ծանուցում է ուղարկել առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Մասնակցի կողմից որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չեն շտկվել:»:

2017թ. մայիսի 26-ին էլեկտրոնային փոստի միջոցով Պատվիրատուն ուղղարկել է հետևյալ պարզաբանումն այն մասին, որ «Արհովշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած պայմանագրերից ոչ մեկը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատմամբ չի հանդիսանում նմանատիպ աշխատանք:»:

Ընկերությունը նշել է, որ հանձնաժողովի արձանագրությունը և որոշումը կայացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) խախտումներով, ինչը չի բխել ՀՀ գործող օրենսդրության պահանջներից և խախտվել է Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 31-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 65-րդ և 69-րդ կետերով սահմանված պահանջները:

Ընկերությունը մեջբերել է.

- Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջները.

«Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն»:

- Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները.

«Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:»:

- Կարգի 65-րդ կետով սահմանված պահանջները.

«Մասնակիցների, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:»:

- Կարգի 69-րդ կետով սահմանված պահանջները.

«Գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: *Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը*: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:»:

Ընկերությունը գտնում է, որ «Արհովշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած նմանատիպ պայմանագրերը հանդիսանում են Ընթացակարգի հրավերով պահանջվող համանման համարվող տնտեսական գործունեության նույն տեսակ, քանի որ այդ պայմանագրերն

իրականացվել են Ընթացակարգի հրավերով պահանջվող լիցենզիայի շրջանակներում կատարված աշխատանքներ:

Ընկերությունը, Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է՝

1. որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառել ժամանակավոր միջոցներ Ընթացակարգը կասեցնելու մասին,

2. դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.05.2017թ. կայացած նիստում թիվ 3 արձանագրությամբ «Արհովշին» ՍՊԸ-ի որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում անհամապատասխանության վերաբերյալ կայացրած որոշումը:

Խորհրդի 02.06.2017թ. նիստին մասնակցում էր «Արհովշին» ՍՊԸ-ի տնօրեն՝ Արամայիս Գրիգորյանը:

2. <u>ՀՀ մշակույթի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

ՀՀ մշակույթի նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 02.06.2017թ. թիվ 02/7.1/3133-17 գրությամբ Խորհրդին է ներկայացրել ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38 ծածկագրով բաց ընթացակարգի (այսուհետ նաև՝ ընթացակարգ) հրավերը, գնահատող հանձնաժողովի 16.05.2017թ. թիվ 2 և 26.05.2017թ. թիվ 3 նիստերի արձանագրությունների պատճենները, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված եզրակացությունը, որակավորման պահանջների հիմնավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանության վերաբերյալ գրության, պարզաբանման պահանջի և տրված պարզաբանման պատճենները, ինչպես նաև դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 69-րդ կետով սահմանված պահանջը խախտված չէ, քանի որ ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար՝ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների ձեռքբերման «ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերով (այսուհետ՝ Հրավեր) սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորությունը բացառելու նպատակով հստակ նշվել են, թե որոնք են համարվում նմանատիպ

աշխատանքներ՝ համապատասխան հղում կատարելով նշված պահանջի իրավական հիմքերին՝ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք, «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործմանկարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշում, ՀՀ կառավարության 2003 թ. նոյեմբերի 27-ի N 1549-Ն որոշման 1-ին կետ, ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 23-ի N 879-Ն որոշման N 8 հավելվածով հաստատված գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի 32-րդ և 34-րդ կետեր:

Մասնավորապես՝ Հրավերի 1-ին մասի 2.3-րդ և 2-րդ մասի 2.2.3-րդ կետերով սահմանվել է, որ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար մասնակցի կողմից նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) համարվում են նմանատիպ, եթե կատարվել են պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքներ:»:

Պատվիրատուն հավելել է նաև, որ 11.04.2017թ. հրապարակվել է Գնումների աջակցման կենտրոնի դրական եզրակացությունն այն մասին, որ «ՀՀՄՆ-ԲԲԱՇՁԲ-17/38» ծածկագրով ընթացակարգի՝ ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. N 1169-Ն հրամանով սահմանված գնահատման ենթակա տեղեկությունները համապատասխանում են գնումների մասին ՀՀ օրենսդրությանը:

Պատվիրատուն նշել է, որ.

«Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում 1, 2, 4, 6, 7, 10, 11-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցած և բավարար գնահատված մասնակից «Արհովշին» ՍՊԸ-ին առաջարկվել էր 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Որակավորման պահանջներին մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստի արդյունքում մասնակցի հայտը մերժվել էր: Մասնավորապես «Արհովշին» ՍՊԸ-ի որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա էր անհամապատասխանություն. մասնակցի նախկինում կատարած աշխատանքները չէին համապատասխանում «ՀՀՄՆ-ԲԲԱՇՁԲ-17/38» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված նմանատիպ աշխատանքների պահանջներին:

Մասնակցին էլեկտրոնային եղանակով 25.05.2017թ. ծանուցում է ուղարկվել՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Միաժամանակ նույն օրը մասնակցին հեռախոսով մանրամասն պարզաբանվել է, թե որ աշխատանքներն են համարվում նմանատիպ:

26.05.2017թ. «Արհովշին» ՍՊԸ-ն գնման ընթացակարգի քարտուղարից էլեկտրոնային փոստի միջոցով խնդրել է լրացուցիչ պարզաբանում, որին էլեկտրոնային փոստի միջոցով տրվել է գրավոր պարզաբանում:

Արդյունքում՝ մասնակցի կողմից որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չեն շտկվել, ինչով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Արհովշին» ՍՊԸ-ի հայտը մերժվել է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցներին:»:

Խորհրդի նիստերին մասնակցում էին Պատվիրատուի ներկայացուցիչներ՝ ՀՀ մշակույթի նախարարության շխատակազմի գնումների հարցերով փորձագետներ՝ Արսեն Սողոմոնյանը և Նանե Կարապետյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2017/11 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԷՍ-2017/11 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38 ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2017 թվականի ապիրլի 4-ի թիվ 1 որոշմամբ հաստատված և հրապարակված N ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38 ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը:
2. Հանձնաժողովի 2017թ. մայիսի 26-ի կայացած նիստի թիվ 3 արձանագրությունը:
3. ՀՀ մշակույթի նախարարության 02.06.2017թ. թիվ 02/7.1/3133-17 գրությունը:
4. Խորհրդի նիստերի ընթացքում Պատվիրատուի և Ընկերության ներկայացուցիչների կողմից արտահայտած կարծիքները և դիրքորոշումները:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդը ուսումնասիրել է «Արհովշին» ՍՊԸ-ի 31.05.2017թ. ներկայացրած բողոքը, Պատվիրատուի ներկայացրած փաստաթղթերը, N ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38 ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38 ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 2017թ. մայիսի 26-ի կայացած նիստի թիվ 3 արձանագրությունը, Պատվիրատուի ներկայացուցչի ներկայացրած դիրքորոշումը և կարծիքը, ՀՀ մշակույթի նախարարության 02.06.2017թ. թիվ 02/7.1/3133-17 գրությունը.

ՀՀ մշակույթի նախարարությունը՝ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով 05.04.2017թ. հայտարարել է N ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38 ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

«Արհովշին» ՍՊԸ-ն կազմակերպված ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժիններին մասնակցելու նպատակով ներկայացրել է հայտ:

Ընկերության կողմից ներկայացրած հայտը հանձնաժողովի կողմից 2017թ. մայիսի 26-ի թիվ 3 արձանագրության 1.6 կետով մերժվել է՝ հրավերով սահմանված որակավորման պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 31-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 2-րդ մասի 1)-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 65-րդ կետով սահմանված է, որ.

«Մասնակիցների, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:»:

Կարգի 69-րդ կետով սահմանված է, որ.

2) «Գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության

տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:»:

«Արհովշին» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի 3.1 հավելվածով՝ մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, «Արհովշին» ՍՊԸ-ն հայտնել և հավաստել է, որ N ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38 ծածկագրով բաց ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է «ԵՔ-ԲԸ-ԱՇՁԲ-15/92-1» ծածկագրով Երևան քաղաքի թիվ 25 մանկապարտեզի հիմնանորոգման, «ԵՔ-ԲԸՀ-ԱՇՁԲ-15/2» ծածկագրով Երևան քաղաքի Վ. Համբարձումյանի անվան թիվ 12 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի պատուհանների փոխարինման և վերանորոգման, «ԵՔ-ԲԸՀ-ԱՇՁԲ-15/4» ծածկագրով Երևան քաղաքի Բելինսկու անվան հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի հիմնանորոգման, «ԵՔ-ԲԸՀ-ԱՇՁԲ-15/10» ծածկագրով Երևան քաղաքի թիվ 186 հիմնական դպրով ՊՈԱԿ-ի շենքի վերանորոգման աշխատանքները, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 106.377.830 ՀՀ դրամ և պարտավորվում է նշված ծածկագրով բաց ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ներկայացնել նույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Բողոքի քննության նպատակով 02.06.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ, Պատվիրատուի ներկայացուցիչները չհերքեցին այն փաստը, որ Ընկերության կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրով նախատեսված աշխատանքները իրականացվել են Հրավերով պահանջվող լիցենզիայի շրջանակներում, թեև պնդեցին, որ Հանձնաժողովի կողմից կայացրած որոշումը պայմանավորել է նրանով, որ «Արհովշին» ՍՊԸ-ի որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն՝ մասնակցի նախկինում կատարած աշխատանքները չեն համապատասխանում Հրավերով սահմանված նմանատիպ աշխատանքների պահանջներին, քանի որ Հրավերով սահմանվել է, որ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) համարվում են նմանատիպ, եթե կատարվել են պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքներ:

Խորհուրդը արձանագրում է, որ N ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38 ծածկագրով բաց ընթացակարգով ձեռք են բերվում շինարարական աշխատանքներ, իսկ շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են՝ հաշվի

առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը:

Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրերը իրականացվել են Ընթացակարգի հավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջված՝ քաղաքաշինության բնագավառում «Շինարարության իրականացում (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)» լիցենզիայի («Բնակելի, հասարակական և արտադրական» ոլորտի) շրջանակներում:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 1)-ին կետով և Կարգի 69-րդ կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Արհովշին» ՍՊԸ-ի 31.05.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Դադարեցնել՝ Հանձնաժողովի 2017թ. մայիսի 26-ի կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ «Արհովշին» ՍՊԸ-ի որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում անհամապատասխանության վերաբերյալ կայացրած որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ